**NOR OR**

AN ARMENIAN SEMI-WEEKLY NEWSPAPER

Published every Tuesday and Friday, except holidays
and two weeks in July

NOR OR PUBLISHING ASSOCIATION, INC.
7466 Beverly Boulevard, Suite 101, Los Angeles, Ca. 90036
Tel.: Editor (213) 933-3298, Printing Dept. (213) 933-8248

**«ՆՈՐ ՕՐ» — ԵՌՕՐԵԱՅ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ

Տարեկան բաժնեգին ամէն տեղի համար՝ $20·00

Հեռ.՝ Խմբագրատուն (213) 933–3298, Տպարան (213) 933–8248

54ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 63, Ուրբաթ, 3 Սեպտեմբեր, 1976

## ՀԱՅՐԵՆԻ ԲՐՈՖԵՍՈՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Օգոստոսի 16էն մինչեւ 20ը, Թեքսաս նահանգի Լուպպոք քաղաքին մէջ կայացաւ Աղի ջրերու ստուգման միջազգային խորհրդաժողովը։ Անոր մասնակցեցաւ Հայաստանի հողագիտութեան եւ Ագրոքիմիայի գիտահետազօտական ինստիտուտի տնօրէն դոկտոր բրոֆեսոր Հրանդ Պետրոսեանը։ Անոր զեկուցման նիւթն էր «Արարատեան դաշտավայրի աղոտ հողերի բերացման եւ աղիացած ջրերի օգտագործման մասին»։

Հայրենի հիւրը տարբեր առիթներով եղեր է Ֆրանսա, Հոլանտա, Անգլիա, Գուպա, Եգիպտոս եւ շատ ուրիշ երկիրներ։ Միացեալ Նահանգներ եկեր էր նաեւ 1967–ին։

Բրոֆ. Հրանդ Պետրոսեանը նոյն ատեն Սովետ Միութեան հողագիտութեան ընկերութեան փոխ նախագահն է, եւ Սփիւռքահայութեան հետ մշակութային կոմիտէի պատասխանատու անդամ։

Շուրջ մէկ ու կէս տասնամեակ է, որ Հայաստանի մէջ ստեղծուեր է Հողագիտութեան եւ Ագրոքիմիայի գիտահետազօտական ինստիտուտը։ Անոր անձնակազմին ժրաջան աշխատանքին շնորհիւ զգալի յաջողութիւններ ձեռք բերուեր են։ Հոն մշակուած է առաջաւոր մեթոտ քիմիական թափուկները (աւելցուքները) օգտագործելու համար։ Այդ եղանակով Հայաստանի աղուտ հողերը կը պարարտացուին եւ օգտանի կը դառնան մշակուելու։

Բրոֆեսոր Պետրոսեանը դէպի Թեքսաս երթալու ճանապարհին երկու օր մնաց Նիւ Եորք եւ շարք մը տեսարժան վայրեր այցելեց։

ՍԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ